



Լու Անշելեսի Շրջան

COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ. Դեղաչափեր հիմունային Անբավարարություն ունեցող Մարդկանց Համար

Պատվաստանյութի Հիմնական Շարքը եղել է Pfizer-ը կամ Moderna-ն

mRNA պատվաստանյութի լրացուցիչ (3-րդ) դեղաչափը խորհուրդ է տրվում միջին կամ խիստ թուլացած հիմունային համակարգեր ունեցող մարդկանց:


CDC-ն միջին կամ խիստ հիմունային անբավարարություն ունեցող մարդկանց, որոնց պատվաստանյութի հիմնական շարքը եղել է Pfizer-ը կամ Moderna-ն, խորհուրդ է տալիս ստանալ 3-րդ դեղաչափը: Սա ներառում է այն մարդկանց, որոնք՝

- Ստանում են քիմիաթերապիա ուռուցքների կամ արյան բաղցկեղի դեմ
- Ունեցել են օրգանների փոխպատվաստում կամ ընդունում են հիմունային համակարգը ճնշող դեղորայք
- Նախորդ 2 տարիների ընթացքում ունեցել են ցողունային բջիջների փոխպատվաստում կամ ընդունում են հիմունային համակարգը ճնշող դեղորայք
- Ունեն միջին կամ առաջնային խիստ հիմունային անբավարարություն (ինչպիսիք են ԴիՁորջի կամ Վիսկոտ-Օլրիչի համախտակիչները)
- Ունեն բարդացած կամ չբուժված ՄԻԱՎ վարակ
- Ստանում են ակտիվ բուժում բարձր չափաբաժիններով կորտիկոստերոիդներով կամ այլ դեղամիջոցներով, որոնք կարող են ճնշել հիմունային համակարգի արձագանքը:


Այդ 3-րդ դեղաչափը պետք է լինի COVID-19-ի դեմ նույն պատվաստանյութը, որը ստացել եք ձեր հիմնական պատվաստումների ժամանակ: Խոսք է ձեր բժշկի հետ COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափի ստանալու անհրաժեշտության մասին և պարզեք լավագույն ժամանակը՝ հիմնվելով ձեր ընթացիկ բուժման ծրագրի վրա: Սա հատկապես կարևոր է, եթե պատրաստվում եք սկսել կամ վերսկսել հիմունային համակարգը ճնշող դեղորայքով բուժումը:

Խթանիչ դեղաչափ ստանալը կարող է դիտարկվել լրացուցիչ (3-րդ) դեղաչափը ստանալուց առնվազն 6 ամիս անց և կարող է լինել COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ:

Pfizer. լրացուցիչ դեղաչափը պետք է լինի Pfizer



Moderna. լրացուցիչ դեղաչափը պետք է լինի Moderna



Պատվաստանյութի Հիմնական շարքը եղել է Johnson & Johnson (J&J)

CDC-ն միջին կամ խիստ հիմունային անբավարարություն ունեցող մարդկանց, որոնց պատվաստանյութի հիմնական շարքը եղել է J&J-ը, խորհուրդ է տալիս ստանալ խթանիչ դեղաչափը: Խոսք է ձեր բժշկի հետ՝ պարզելու լավագույն ժամանակը՝ հիմնվելով ձեր ընթացիկ բուժման ծրագրի վրա: Սա հատկապես կարևոր է, եթե պատրաստվում եք սկսել կամ վերսկսել հիմունային համակարգը ճնշող դեղորայքով բուժումը:



Visit ph.lacounty.gov/VaccineAppointment for more information.

10/27/21 COVID Vaccines: Doses for Immunocompromised (Armenian)

